

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍԵԻ ԱՌԱԶԻՆ ՏԻԿԻՆԸ ԳԻՆԱՍՏԱՆ ԱՅՅԵԼԵՅԻՆ

Հինգշաբթի, 21 Սեպտեմբեր 2023-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ եւ առաջին տիկին Ասմա ալ-Ասատ պաշտօնական այցելութեամբ Չինաստան ժամանեցին: Խանճոյի միջազգային օդակայանէն ներս պաշտօնական ընդունման արարողութիւն տեղի ունեցաւ, ուր ներկայ գտնուե-



ցան Չինաստանի առեւտուրի նախարարը, Դամասկոսի մէջ Չինաստանի դեսպանը եւ այլք, պատուոյ պահակազուկին կողքին:

Փեքինի մէջ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ եւ առաջին տիկին Ասմա ալ-Ասատի առաջին կայանը Չինաստանի սուրիական համայնքին հետ հանդիպումն էր: Հանդիպումը առիթ էր հայրենիքի շուրջ խօսելու, յատկապէս յառաջիկայ փուլին՝ սուրիական սփիւռքին հաւանական ներդրումը քննարկելու: Հանդիպումին ընթացքին նախագահը խօսեցաւ նաեւ համայնքին զաւակներուն եւ Չինաստանի յարաբերութեան շուրջ, հաստատելով անոնց դերակատարութիւնը Չինաստանի բարգաւաճման գործընթացին մէջ: Նախագահը խորհրդակցեցաւ նաեւ Չինաստանի տընտեսական փորձառութեան եւ այդ փորձառութենէն օրինակ առնելու շուրջ: Սուրիոյ Նախագահը եւ Չինաստանի նախագահը հանդիպում ունեցան Չի-

Շար. Էջ 8 >

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍԵԻ ԱՌԱԶԻՆ ՏԻԿԻՆԸ ՄԱՍՆԱԿՅԵՅՑԱՆ ԳԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՅԿԵՐՈՅԹԻՆ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ եւ առաջին տիկին Ասմա ալ-Ասատ մասնակցեցան Չինաստանի նախագահին եւ անոր տիկնոջ կազմակերպած պատուոյ հացկերոյթին, որ տեղի ունեցաւ Խանճօ քաղաքին



մէջ, ներկայութեամբ Ասիական Խաղերուն 19-րդ շրջանի բացումին մասնակցող պատուիրակութիւններու նախագահներուն եւ ղեկավարներուն:

Չինաստան տուած իր այցելութեան աւարտին, Սուրիոյ նախագահը չինական կողմին հետ միացեալ հաղորդագրութիւն մը հրապարակեց՝ երկու երկիրներուն միջեւ ռազմավարական գործակցութեան եւ յարաբերութիւններու ընդլայնման շուրջ:

Հաղորդագրութիւնը կ'ընդգծէր հետեւեալները.

-Չինաստան գօրակցութիւն կը յայտնէ Սուրիոյ գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման, ինչպէս նաեւ կը գօրակ-

Շար. Էջ 8 >

ՀԱԶԱՐԱԽՈՐ ԱՐՅԱՆՅԻՆԵՐ ՏԵՂԱՆՈՒԷՅԱՆ ԻՐԵՆՅ ՀԱՅՐԵՆԻՔԸՆ

Երկուշաբթի, 25 Սեպտեմբերին Արցախ աշխարհէն հայերու բռնի տեղահանման երեւոյթը ստացաւ զանգուածային բնոյթ, հազարաւոր արցախցի-



ներ լքեցին իրենց հայրենի բնօրրանը՝ ապաստան գտնելու համար Մայր Հայաստանի մէջ:

Ձեռք բերուած պայմանաւորութիւններուն համաձայն, ռուսական խաղաղապահ զօրախումբը նախանցեալ օր Ստեփանակերտի օդակայանէն մինչեւ Հայաստան ուղեկցած է տեղւոյն բնակիչներու 12 փոխադրակառքերուն եւ 41 անձնական ինքնաշարժներուն, այս մասին կը տեղեկացնէ խաղաղապահներու թելեկրամեան ալիքը:


Շար. Էջ 3 >

ԱՐՅԱՆՏԻ ՄԻՊ. «ԱՐՅԱՆՏԻ ՄԵՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՊԱՅԹՈՒՄԻՆ ՀԵՏԵԱՆՔՈՎ ԶՈՇԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԾ Է 68-Ի»

Վառելանիւթի պահեստանոցին մէջ Երկուշաբթի օր տեղի ունեցած պայթումին հետեւանքով արձանագրուած զոհերուն թիւը հասած է 68-ի, կը յայտնէ Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան՝ աւելցնելով, որ պարզ է միայն 21-ին ինքնութիւնը:

«Վիրաւորուած են 290 քաղաքացիներ, որոնցմէ 168-ը այսօր տեղա-

փոխուած է 33 բժշկական հաստատութիւններ՝ 96-ը՝ 33 ռուս խաղաղապահներու ուղղաթիւներով, 72-ը՝ 33 շտապ օգնութեան մեքենաներով՝ Կարմիր Խաչի Միջազգային կոմիտէի ուղեկցութեամբ», գրած է Ստեփանեան:



Տեղեկատուական կետրոններ ստացուած զանգերուն ամփոփ տուեալներուն համաձայն՝ պայթումին հետեւանքով անյայտ ճակատագրով քաղաքացիներուն թիւը 105 է:

Պայթումին հետեւանքով տուժած 14 անձ արդէն տեղափոխուած է «Այրուածքաբանութեան եւ Մաշկաբանութեան Ազգային Կեդրոն»: Բժիշկներէն մէկը յայտնեց, որ տուժածներուն առողջական վիճակին մասին տեղեկութիւններ կրնան յայտնել միայն հետազօտութիւններէն վերջ:

Ստեփանակերտէն արդէն 4-րդ ուղղաթիւը ուղեւորուած է դէպի Հայաստան, բժիշկներէն մէկուն փոխանցումով, իւրաքանչիւր ուղղաթիւով 7 տուժած տեղափոխուած է:

Աւելի ուշ հաղորդուած է, որ պայթումին հետեւանքով հիւանդանոցներ ընդունուած են 290 տուժածներ:

Խմբագրական

ՈՐ ԱՐՈՒԵՍՏԻՆ ԶԵՆՔ ԿՐՅԱԾ ՏԻՐԱՊԵՏԵԼ

Պատմական հայրենիք կորսնցուցիկն ու պահ մը հաւատալով մարդկային իրաւունքներուն, միջազգային դատարաններուն, ենթադրեցիկն, որ անոնք կրնան պաշտպանել արցախահայութեան՝ ազգիս մէկ բեկորին իրաւունքը, մեզի հետ միաբերան դատապարտելով ու կոչեր ուղղելով ցեղասպանին:

«Մի՛ մոռնաք, պատմութիւնը վկայ, արուեստներուն մեծագոյնը ռազմական արուեստն է: Մշակոյթներուն մեծագոյնը պետական արուեստն է, պետականութիւն ստեղծելու ունակութեան արուեստն է...»:

«Մի՛ ըսէք, որ մենք գիրք կը գրենք, զէնքը ուրիշներուն գործն է: Զէնքը նոյնքան արուեստ է եւ արժէք, որքան գիրքը...»:

«Գետնին սողացող ազգեր չկան, ստրուկներ կան: Գետնին վրայ սողացող ժողովուրդները դատապարտուած են գետնին տակը մտնելու: Գետնին վրայ քալելու համար ոտքի քալող ժողովուրդներ պէտք են...»:

Իրաւացի էր մտաւորական, հրապարակագիր Սարգիս Զէյնլեան իր այս խօսքով: Անոր նմաններուն խօսքին անսացի՞նք ազգովին...

Յաւիտեան քալելու արուեստին տիրապետելով մէկտեղ, Գարեգին Նժդեհներ, Արամ Մանուկեաններ, Թաթուլ Կրպեաններ ունենալով մէկտեղ, չյաջողեցանք անոնց աւանդը, ազգային հպարտութիւնը, քաղաքական բանիմացութիւնը, պետական մտածողութիւնը փոխանցել ներկայ սերունդներու մեծամասնութեան:

Չյաջողեցանք, որովհետեւ չվարժեցուցինք զիրենք կարդալու անոնց պատմութիւնը, ըմբռնելու անոնց քաղաքական փիլիսոփայութիւնն ու մարտունակ ոգին:

Հազարամեակներ շարունակ հայութեան բնօրրանը դարձած ու յաճախ յարձակումներու ենթարկուած, բայց դիմադրած Արցախը կորսնցուցիկն: Արցախահայութիւնը բռնի տեղահանութեան ենթարկուեցաւ:

Աւելին. Հայաստան եւս կանգնած է այսօր քաղաքական եւ ապահովական լրջագոյն հարցերու առջեւ:

Մեր փրկութիւնը, սակայն, ոչ արեւմուտքէն, ոչ ալ հարեւան երկիրներէն պիտի գայ:

Մենք պիտի կարենանք փրկել մեր հայրենիքին մնացորդացը, եթէ զինուի՞նք ու տոգորուի՞նք պայքարի ոգիով ամեն օր, առանց մեզ պառակտող քարոզչութեան գերին դառնալու, հարցերուն խորքը թափանցելով, առանց ազգիս զաւակները արցախցի, հայաստանցի, դուրսի, ներսի հայերու բաժնելու:

Մեր փոխարէն ոչ ոք պիտի մարտնչի, ոչ ոք պիտի ամոքէ արցախցիին վիշտը, որ համայն հայութեան կոտորածով վերքը դարձաւ: Մեր փոխարէն ոչ ոք պիտի պաշտպանէ մեր ազգին ու պետութեան շահերը:

Յաւիտեան, Հայաստան ինքն իր ճակատագրին տերը ըլլալու փոխարէն սկսած է այս կամ այն երկրին դռները թակել ու հարեւան երկիրներու ապաւինիլ, երբեմն չզանազանելով թշնամին դաշնակիցէն: Միթէ՞ նոյն պատճառով չկորսնցուցինք Արցախը:

Խաղաղապահներ կը հրաւիրենք, առիթ կու տանք, առանց փոխարէնը մեր ապահովութիւնը գետնի վրայ ամրապնդելու: Խաղաղապահները փաստօրէն միայն դիտորդի դեր կատարեցին, առանց պահպանելու խաղաղութիւնը, առանց կասեցնելու արցախահայութեան ցեղասպանութիւնը:

Ժամանակն է հասկնալու, որ մեր պետութեան, մեր ազգին ապահովութիւնը միայն մեր ուժերով կարելի է ամրագրել:

Ուստի յուսալքուելու փոխարէն, նախ տիրութիւն պէտք է ընել տեղահանուած արցախահայութեան, միաժամանակ հայրենի պետութեան պաշտպանական համակարգը զօրացնելու միջոցները ամրապնդել՝ գալիք օրերու դժբախտութիւնները կանխելու եւ մեր հպարտութիւնը վերագտնելու համար:

Այս նպատակներուն շուրջ համախմբուելու յանդակութիւնն ու կամքը պիտի ունենանք վերջապէս:

«Գ.»

-Սուրիոյ առաջին տիկին Ասմա ալ-Ասատ Փեքինի օտար ուսումնասիրութիւններու համալսարանին մէջ արաբական ուսումնասիրութեան ճիւղի աշակերտներուն հետ գրոյց ունեցաւ: Զրոյցը ընդգրկեց պետութիւններու միջեւ լեզուի, մարդկային յարաբերութիւններու եւ մշակոյթի շուրջ խորհրդակցութիւններ, ներկայութեամբ՝ ուսուցիչներու, աշակերտներու եւ Չինաստանի մէջ արաբական եւ եւրոպական պետութիւններու դեսպաններու:



Առաջին տիկնոջ, աշակերտներուն եւ ուսուցիչներուն միջեւ տեղի ունեցած գրոյցը յատկանշական էր Չինաստանի եւ Սուրիոյ միջեւ բարոյական, մշակութային, մարդկային եւ ազգային միացեալ սկզբունքներն մեկնելով:

Անոնք անդրադարձան Սուրիոյ եւ Չինաստանի յարաբերութեան, ժառանգութեան պահպանման, քաղաքականութեան եւ անոր մարտահրաւերներուն, մշակոյթի, արհեստի եւ այլն:

Յատկանշական էր նաեւ չինացի աշակերտներուն Սուրիոյ պատմութեամբ եւ իրավիճակով հետաքրքրուիլը եւ սուրիացի աշակերտներուն հանդէպ ունեցած դրական կեցուածքը:

Առաջին տիկինը ըսաւ. «Պատմութեան հնագոյն մայրաքաղաք՝ Դամասկոսն հնագոյն քաղաքակրթութիւններու մայրաքաղաք՝ Փեքին, առաջին կլորքնի օրրան՝ Սուրիայէն հնագոյն լեզուներու եւ բարբառներու տուն՝ Չինաստան կը գտնուի մայսօր, որուն համար հպարտ եմ եւ երջանիկ»:

Առաջին տիկինը աւելցուց. «Անկասկած, որ բոլորս կը դիմագրաւենք ժողովուրդներու ազգային մշակոյթներու ջնջումի փորձեր այլազան ձեւերով, սակայն մէկ վերնագիրի տակ, որն է զարգացում եւ նորարարութիւն: Սակայն նպատակը ինքնութեան եւ պատկանելիութեան ջնջումն է, որուն ամենագորաւոր զէնքը ժողովուրդներուն մայրենի լեզուն էրը հարուածելն է»:

-ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ Հանրապետութեան մնայուն բանագնաց Պասսամ Սապպաղ ՄԱԿ-ի վեհաժողովի 78-րդ շրջանին ընթացքին յայտնեց, որ ԱՄՆ եւ Թուրքիա կը շարունակեն իրենց ոտնձգութիւնները Սուրիոյ մէջ եւ կը խախտեն անոր գերիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը՝ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու զօրակցելով եւ սուրիական հողերուն մէջ իրենց ուժերուն ապօրինի ներկայութիւնը շարունակելով:



Սապպաղ աւելցուց, որ սուրիական քաղաքներուն, օդակայաններուն եւ նաւահանգիստներուն դէմ խորալեւան իրերայաջորդ յարձակումները տարածաշրջանին լարուածութիւնը կը սաստկացնեն: Այս առիթով, ըսաւ ան, Սուրիա խստիւ կը դատապարտէ այս յարձակումները եւ կարգ մը պետութիւններու ցուցաբերած աջակցութիւնը անոնց:

Սապպաղ կոչ ուղղեց վերջ տալու Սուրիոյ, Ռուսիոյ, Իրանի, Վենեզուելայի, Պելաճուսի, Ժողովրդավարական Զորեայի, Սիքարակուայի, Չիմպապուէի եւ Էրիթրիոյ պարտադրուած տնտեսական պատժամիջոցներուն, որոնք տնտեսական ահաբեկչութիւն կը համարուին եւ վտանգով չեն նուազիր զինեալ ահաբեկչութենէն՝ իրենց մարդկային աղետալի հետեւանքներով:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ «Շինխօ» լրատու գործակալութեան հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին, շեշտեց, որ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի Չինաստան այցելութիւնը նոր եւ կարեւոր յառաջընթաց եղաւ երկու երկիրներու յարաբերութեան պատմութեան մէջ:



Նախարար Մըքտատ աւելցուց, որ վերջին տարիներուն ընթացքին, Սուրիոյ եւ Չինաստանի յարաբերութիւնները զարգացան, միջազգային իրավիճակը փոփոխութեան ենթարկուեցաւ եւ Չինաստան ակնառու դեր ունեցաւ տարբեր մակարդակներով:



Լուրեր Հայաշխարհին

«ԽՕՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՎԵՐՉԱՅԱԾ Է: ԴԵՏՔ Ե ԴԻՄԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ». ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԻՇխանություններին ԴԵՄ ԼԱՅՆԱԾԱԿԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԸ ՁԵՌՆԱՐԿԷ

21 Սեպտեմբերին Երևանի Հանրապետության հրապարակին վրայ տեղի ունեցավ հանրահավաք Արցախի մէջ տիրող իրավիճակին համար:

ՀՀ Բարձրագույն Գերագույն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան իր ելույթին մէջ նշեց, որ ՀՀ ոստիկանութիւնը՝ ոստիկանապետ



տէն մինչեւ շարքային կատարող յանցակից են Նիկոլի եւ Ալիեւի ցեղասպան գործունեութեան: Ան տեղեկացուց.

«Այս պահուն ոստիկանութիւնը բիրտ եւ անհամաչափ ուժ կը կիրառէ փողոցը ցոյց իրականացնող քաղաքացիներուն նկատմամբ:

Ձերբակալուած եւ բերման ենթարկուած են հարիւրաւոր քաղաքացիներ:

ՀՀ ոստիկանութիւնը՝ ոստիկանապետն մինչեւ շարքային կատարող, իր գործունեութեամբ կը նպաստէ եւ յանցակից կը դառնայ Նիկոլի եւ Ալիեւի ցեղասպան գործունեութեան: Ասիկա այլեւս յանցակցութիւն է ցեղասպանութեան:

Դուք այլեւս չէք ծառայեր ՀՀ-ին, այլ կը կատարէք թրջահպատակ իշխանութիւններուն ապօրինի որոշումները, որուն համար պատասխան պիտի տարք»:

Իշխան Սաղաթելեան նշեց, որ այս շարժումը միւս բոլորէն կը տար-

բերի անով, որ մարդիկ ինքնաբերաբար կը կազմակերպուին եւ ցանցային, ապակերտ պայքար կը տանին: Այս օրերուն շուրջ 500 հոգի բերման ենթարկած են, քրեական գործեր կը յարուցեն, որպէսզի կարենան կասեցնել ընդդիմութեան պայքարը:

Իր կարգին Հայաստանի նախկին վարչապետ Վազգէն Մանուկեան հանրահավաքին յայտարարեց. «Խօսելու ժամանակը վերջացած է, պէտք է սկսիլ գործողութեան»:

Ան ընդգծեց, որ այսօր Արցախը արհեստագործ կ'ըլլայ եւ ոչ մէկ պաշտպան ունի:

«Որեւէ երկիր իր քաղաքացիի՝ մէկ հոգիի համար օղակաւ կ'ունենայ: Արցախի մէջ երեխաներ կը գողտնան, մայրեր, տղամարդիկ մինչեւ վերջ կը պայքարին: Մինչեւ հիմա դեռ որոշ տեղերու մէջ պայքարը ընթացքի մէջ է: Ինչպէ՞ս կրնայ այսպիսի իշխանութիւն ըլլալ Հայաստանի մէջ: Այս իշխանութիւնը գոյութիւն չունի, դրժ էք իշխանութիւնը», ըսաւ Վազգէն Մանուկեան:

Ան նշեց, որ Երևանի մէջ կը սկսին զանգուածային գործողութիւններ, որոնք պէտք է հասնին սպասուած փուլին, իսկ Հայաստանի Հանրապետության իշխանութիւնը կը սխալի՝ կարծելով, թէ քանի մը օր ետք հանրահավաքները պիտի աւարտին:

«Ոչ: Այն ցեղասպանութիւնը, որ Հայաստանի Հանրապետության գործող իշխանութեան պատճառով եւ մեղքով տեղի կ'ունենայ Արցախի մէջ, պիտի մտնէ Հայաստան: Մենք կը սկսինք զանգուածային անհնազանդութեան գործողութիւններուն: Անոնց պէտք է միանայ ոչ միայն Երևանի բնակչութիւնը, շրջաններէն ալ պէտք է գան Երևան՝ մասնակցելու», ըսաւ Վազգէն Մանուկեան:

«Մենք 5 հոգիով կազմեցինք Ազգային կոմիտէ, որուն կազմին մէջ են Հայկ Մամիջանեանը, Ալեքսի Չալաբեանը, Անդրանիկ Թեւանեանը, Իշխան Սաղաթելեանը եւ եւ: Մենք պէտք է հարցի լուծում տանք ըստ կարելւոյն օրինական կերպով եւ մեզի համար մեծ նշանակութիւն ունին այն գործընկերները, որոնք կը գտնուին Ազգային ժողովին մէջ, բայց ըստ կարելւոյն շուտ պէտք է սկսիլ անհնազանդութեան գործողութիւնները: Վաղը՝ ժամը 11:00-ին այստեղ պիտի կայանայ կառավարութեան նիստ, բայց մենք ժամը 10:00-ին պիտի շրջափակենք կառավարութեան շէնքը», յայտարարեց Վազգէն Մանուկեան:

Ընդդիմադիր Ազգային կոմիտէի հանրահավաքները իշխանութեան հրաժարականի պահանջով շարունակուեցան մինչեւ 26 Սեպտեմբեր:

ՀԱՅԱՐԱՌ...

Սկիզբ՝ էջ 1

Խաղաղապահները ուղեկցած են Մարտակերտէն, Ասկերանէն եւ Մարտունիէն Ստեփանակերտ շարժող խաղաղ բնակիչներուն:

Մարտակերտի քաղաքապետ Միշա Գիւրջեանը «Ազատութիւն» ծայրահասփունի կայանին տեղեկացուցած է, որ Մարտակերտը ամբողջութեամբ ազդաբնակեցուցիչներուն յանձնուած է: Վերջին բնակիչները այնտեղէն դուրս եկած են նախանցեալ օր, շուրջ հազար ինքնաշարժով, եւ երեկոյան հասած են Ստեփանակերտ: Ինք եղած է շարաստանի վերջաւորութեան:

Մարտակերտի քաղաքապետը ըսաւ, որ քաղաքային բնակչութեան զոհեր չունին, բայց ունին անհետ կորուսածներ: Ան սակայն նշեց, որ դիրքերը պահող զինուորներուն շարքերուն մէջ 20 զոհ ունին:

Ատրպէյճանական լրատուամիջոցները արդէն նախանցեալ երեկոյան լուսանկարներ հրապարակած էին, թէ ինչպէս ազդաբնակեցի գիւղուորները Մարտակերտ քաղաքի ցուցանակին վրայ կ'ամրացնեն Ատրպէյճանի դրոշմը:

Արցախի տեղեկատուական շտապը կը յայտնէ, որ Արցախէն Հայաստան տեղափոխուելու ցանկութիւն ունեցող բոլոր քաղաքացիները պիտի ունենան այդ կարելիութիւնը նշելով, որ տեղափոխուելու համար սահմանուած ժամկետներ չկան:

Ըստ շտապին, առաջնահերթօրէն Հայաստան կը տեղափոխուին ռազմական գործողութիւններու պատճառով տարհանուած, անօթեան մնացած եւ ծանր կացութեան մէջ յայտնուած ու Հայաստան տեղափոխուիլ ուզող քաղաքացիները:

«Արցախի իշխանութիւնները պիտի շարունակեն մնալ իրենց տեղերը եւ պետական կառավարում իրականացնել այնքան ժամանակ, մինչեւ որ ամբողջութեամբ ապահովեն Հայաստանի Հանրապետութիւն ուղեւորուելու ցանկութիւն ունեցող քաղաքացիներու տեղափոխման գործընթացը», նշուած է յայտարարութեան մէջ:

25 սեպտեմբերի ժամը 17:00-ի դրութեամբ Արցախէն Հայաստան մուտք գործած է բռնի տեղահանուած 6 հազար 650 անձ, յայտնեց Հայաստանի կառավարութիւնը:

Անոնցմէ 5 հազար 580-ին վերաբերեալ հաշուառման տուեալները ամփոփուած են, իսկ 1070-ին կարիքներու գնահատումը նոյնականացման փուլին մէջ է:

Բոլոր անոնց, որոնք չունին կեցութեան նախապէս որոշուած վայր, ըստ հաղորդագրութեան, կառավարութիւնը կ'ապահովէ համապատասխան կեցավայր:

Այս միջոցին երեկ Իւանեանի մէջ (Խոջալու) տեղի ունեցած է Արցախի հայերու եւ Ատրպէյճանի ներկայացուցիչներու հերթական հանդիպումը: Այդտեղ կը գտնուի ռուս խաղաղապահներու հիմնական կեդրոնատեղի:

Կողմերու առաջին հանդիպումը 21 Սեպտեմբերին տեղի ունեցած էր Եւլախի մէջ:

Ատրպէյճանի նախագահականը կառուցողական նկատեց երեկուան հանդիպումը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներուն հետ: Կը նշուի, որ Պաքովի ու Ստեփանակերտի ներկայացուցիչները քննարկած են մարդասիրական շարք մը խնդիրներու վերաբերող հարցեր:

«Գործողութիւններու ընթացիկ ուղղութիւնները որոշելու համար, Ատրպէյճանի փոխվարչապետ Շահին Մուստաֆայեւի գլխաւորութեամբ, պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է ստեղծելու համատեղ աշխատանքային խումբ՝ համայնքային, բժշկական եւ այլ քաղաքացիական գործունեութեամբ զբաղող ներկայացուցիչներու հետ, ներառեալ Խանքենիի (Ստեփանակերտի) տարածքին մէջ», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Ըստ Ատրպէյճանական լրատուամիջոցներուն պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է յառաջիկային կատարել յաջորդ հանդիպումը՝ քննարկելու կատարուած աշխատանքի արդիւնքները եւ որոշելու հետագայ քայլերը:

Միւս կողմէ, Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհի յարակից տարածքին մէջ՝ պենզիկի պահեստին մէջ, ուժեղ պայթում մը տեղի ունեցաւ երեկ երեկոյան, կը յայտնէ Արցախի արտակարգ իրավիճակներու պետական ծառայութիւնը:

Կան զոհեր եւ վիրաւորներ, այրուածքներ ստացած բազմաթիւ տուժածներ տեղափոխուած են բժշկական հաստատութիւններ:

Կը հաղորդուի, որ այս պահուն տեղւոյն վրայ կ'աշխատին փրկարարական եւ բժշկական խումբերը: Այլ տեղեկութիւններ տակաւին յայտնի չեն:

ՀՐԱՆՔ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ



Մարիանա Պերթիզյան-Ղազարյան

Վերջապես այսօր՝ 25 Սեպտեմբերին, յանդգնությունը կը գտնեմ հեռաձայնելու Մանիային:

Մանիան Ստեփանակերտցի ընկերուհի է, որուն հետ յաճախ գիշերային անձայնութեան եւ ամայնութեան մէջ մեսենձրով կը խօսակցինք: Բնականաբար զիս ամենաշատը կը հետաքրքրէ Արցախի վիճակը, նաեւ՝ Մանիային առօրեան: Խոստացած էի զինք այցելել՝ յաջորդ Յայաստան այցիս, այցելել Արցախ՝ մօտէն ծանօթանալու համար իր հետ, այցելել՝ Ամարաս, որ տակաւին չէի տեսած: 15 տարի առաջ, Գանձասար այցիս, տակաւին տպուած գիրք չունէի: Ծնրադրած էի Գանձասարի գլխաւոր խորանին առջեւ, ինդրած եւ ստացած:

Մանիան՝ բժշկական սպայ է, բուժքրոջ կոչումով, առանձին կ'ապրի Ստեփանակերտի մէջ: Մայրը Ասկերանի մօտ գտնուող Աւետարանաց գիւղի բնակիչ է, ինք իր եղբոր ընտանիքին հետ կ'ապրի: Մեր գրոյցները, մինչեւ վերջերս, ընդհանուր առմամբ լաւատեսութեամբ լեցուն էին, Նոյնիակ ինչ ամիսներու դաժան շրջափակման ընթացքին: Մանիան ժուժկալաբար կը գոհանար գիւղէն իր հետ բերած միրգերով: Չէր սիրեր խօսիլ դժուարութիւններուն մասին: Փոխարէնը ան մեզ մով կը մտահոգուէր, թէ՛ ինչպէ՞ս կ'ապրէինք Յալէպի մէջ, մինչ իրենք մեծագոյն կարիքը ունէին գուրգուրանքի եւ ապահովութեան: Միշտ կ'ըսէի, որ ապահովական առումով հանգիստ ենք, մի՛ մտահոգուիր: Դեռ վերջերս Յալէպի օդակայանին վրայ գործադրուած անհրաժեշտ փոխադրումներու մասին լուրեր ստանալով անմիջապէս գանգեց՝ սրտատրոփ շեշտով մը հարցնելով.



– Ձեր տան մօտ է:
– Ոչ, Մանիա՛, մի՛ մտահոգուիր, – ըսի, – մեզմէ բաւական հեռու է եւ արդէն վարժ ենք այսպիսի բաներուն: Քանի մը օրէն օդակայանը կրկին կը սկսի գործել: Մեզ մտահոգողը դուք էք եւ ձեր ապագան:

Մեր գիշերային գրոյցները միշտ ալ ծիծաղով եւ բարի մաղթանքներով իրենց աւարտին կը հասնէին:

Երէկ եւ այսօր երբ ամէն բան գլխիվայր շրջուեցաւ, տակնուվրայ եղաւ Արցախ Աշխարհը՝ հալածանք եւ սպանութիւններ, հայերու նկատմամբ եղած անհանդուրժողութեան պատճառով ծայր առաւ տարագրութեան ճամբան: Մարդիկ ակամայ լքեցին իրենց տունները: Յեղասպանութիւն... բնիկ ժողովուրդի մը նկատմամբ 21-րդ դարուն, քրիստոնէայ եւ զարգացած աշխարհին աչքերուն առջեւ:

Հրանդ Մաթեոսեան պիտի ըսեր. «Գաս, խաւար վտանգներով լեցուն միջնադարով գաս, հասնես 20-րդ լուսաւոր դարի շեմին ու կոտորուես... Բա հիմա գաս, գաս հասնես երրորդ հազարամեակի շեմին ու քո երկու հազար տարուայ փորձից մի դաս չքաղես...»: Ես պիտի աւելցնէի՝ կրկին կոտորուես, կրկին հողը յանձնես թշնամուն...:



Ազգովին, մեր պատմութեան ամենէն չարաղետ, ահաւոր պայթիւնավտանգ ժամանակներէն մին կ'ապրինք: Կրկին ծեր, երեխայ բռնած են տարագրութեան ճամբան: Լոյս մանուկներ, Արցախի տարբեր շրջաններուն մէջ կրկին բարբարոս թուրքի զնդակին գոհը կը դառնան... Սրտատրոփ, կը փորձեմ մեսենձրորը...

Պատասխանը կ'ուշանայ: «Աստուած իմ, արդեօք ո՞վ պիտի պատասխանէ», կ'ըսեմ, միթէ՞ մնացելին հետ ճամբայ էլած է դէպի Գորիս... Զանի մը անգամ փորձելէ ետք, մէկը լատիստառ կը գրէ.

– Արցախից եմ:
– Հաստատապէս ինք չէ պատասխանողը, – կը մտածեմ: Արիւնս գլուխս կը խուժեմ, միտքես հազար բան կ'անցնի:

Արագ մը գրուած նախկին երկխօսութիւնները կը ջնջեմ: Չըլլայ թէ ազերի մըն է պատասխանողը մտածելով:

Շատ չանցած Մանիային աղօտ ձայնը կը լսեմ. «Ես եմ, շէքուր մեկնակ երկու հողի ենք մնացել, որ չենք գնացել, ես եւ ներքեւի յարկի տարեց դրացուհիս: Սովածութիւնից հազիւ հազ ապրում ենք, մեծ կին է, փորձում եմ օգնել իրեն: Ահաւոր էր. զոհերի թիւը աճում է...», կը նկարագրէ պատահածները, թէ ինչպէ՛ս «կարմիր շուկայ»-ին մէջ աջ ու ձախ գլխատուած պատանիներ, բռնաբարուած երիտասարդուհիներ տեսնուած են նախորդ օրերուն: Թէ ինչպէ՛ս Սառնաղբիւրի գիւղապետը, ազերիներու ռմբակոծութիւններուն ժամանակ կրցած էր բոլոր երեխաները իր գիւղէն դուրս բերել, բոլորը փրկուել էին բացի իր գաւկէն: Թէ ինչպէ՛ս գիւղերուն մէջ, ազերիները արագահարուածներով տուներուն վրայ կրակ կը բանային՝ աջ



ու ձախ դիակներ սփռելով:

– Ի՞նչ եւս ասում լուրերից, – կը հարցնէ ան:
Կը փորձեմ մխիթարել զայն, քաջալերել...
Քիչ մը խօսելէն ետք, կը ինդրեմ, որ անջատ հեռաձայնը, մտածելով որ կրնամ վնաս հասցնել, գիծը կրնայ հետապնդուիլ:

Հազիւ ժամ մը անցած, Մանիան կը գանգէ:
– Ահաւոր պայթիւն տեղի ունեցաւ պեղակայանում, հարիւրաւոր գոհեր, վիրաւորներ... քեռուս տղան էլ գոհուել է: Եկան ինձ տարան հիւանդանոց՝ վիրաւորների համար: Բուժքոյր չկայ, բոլորն էլ ցեղասպանուելու վախից՝ բռնել են Գորիսի ճանապարհը: Երեւի Աստուած կամեցաւ, որ ես մամ այստեղ վիրաւորներին օգնելու համար: Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը անստելի ծանրաբեռնուած է: Այդ ճանապարհով անհնարին է վիրաւորներին որոնք մէջ մեծ թիւ են կազմում ծայրայեղ ծանր վիճակում գտնուողները, հայաստան տեղափոխել: Անյապաղ օդային ճանապարհ է պէտք: Բազմաթիւ միջրացած մարդիկ, ծանր վիրաւորներ՝ երրորդ, չորրորդ աստիճանի այրուածքներով: Տարական դեղամիջոցներ, ցաւազրկիչներ, անգամ վիրակապեր չկան:




Մանիային ձայնը դարձեալ կը սկսի դողալ: Ուժ կու տամ, ըրա՛ծը մեծ գործ է: Ինք եւս կը գիտակցի իր կատարած գործին կարեւորութեան:

Աստուած իմ, կը մտածեմ, այս ինչ մեծ ցաւ է: Սուրիոյ պատերազմին հետ չեմ կրնար համեմատել: Եթէ մերը միայն ինչքերու եւ հոգիի կորուստ էր, այստեղ՝ հայրենիքի, պապենական հողի կորուստ է: Մեր դարաւոր հայրենիքի ամենագողտրիկ մէկ մասին, որուն բնակիչները բնիկներ են... Արցախը հայրենի մարմնին մէկ մասն է, որ սառնասրտօրէն կ'անդամահատուի: Ոչ մէկ պետութիւն իր ազնիւ խոստումը յարգեց: Բոլորն ալ հաւատացին ազերիին սուտերուն, լաւ գիտնալով հանդերձ, որ Արցախը հայկական հող է, իրենց աչքերն ու ականջները փակեցին:

Անտանելի է տեսնել ժողովուրդի մը կոտորածը վերքերը, լսել լացն ու կոծը, մինչ ոչ մէկ բան կրնաս փոխել դառն իրականութենէն: Ամբողջ Էութեամբ կ'ուզես պոռալ՝ Արցախը հայկական է, մարդի՛կ, մեր պապենական հողն է, ձգեցե՛ք որ ստեղծագործ ժողովուրդը խաղաղ ապրի իր հողին վրայ...
Ոռնա՞ս, հայիոյե՞ս, թէ՛ արօթես...
«Կայէ, ո՞ր է Աբելը», կը լսեմ հեռուներէն...
Նոյնիակ եթէ կաթնկեր մայրը իր նորածինը թողու, կ'ըսէ Աստուածաշունչը, ես քեզ չեմ թողուր...
Ուրեմն կաթնկեր մայրը իր նորածինը կը թողու եղեր... ինչպէ՛ս Արցախը լքուեցաւ...
Չար ձեռք մը արմատախիլ ըրաւ ամէն բան, արիւն ու սուգ սփռելով չորսդին...

ԱՉԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ԾԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՑԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Անի Պոտիկյան

Ամեն տարի, նոր տարեշրջան մը չսկսած, ԱՉԳ. Զարեն Եփփե Ծեմարանի Շրջանաւարտից Միութիւնը սովորութիւն ունի հաւաքելու Ծեմարանի շունչով օժտուած շրջանաւարտները՝ միասին անցընելու բանակում մը, որ միշտ վառ կը մնայ իրենց յիշողութեան մէջ:

Այս տարի եւս, հակառակ երկրիս տնտեսական դժուար պայմաններուն, Շրջանաւարտից Միութեան Վարչութիւնը յաջողեցաւ կազմակերպել



հաճելի, օգտաշատ եւ մտերմիկ բանակում մը:

14 Սեպտեմբերի առաւօտուն Ժամանցեցին Զեւապի բանակավայր՝ «Կազդուրման Կայան»: Նախաճաշելէ ու տեղաւորուելէ ետք, հաճելի խաղով մը աւելի ծանօթացանք իրարու: Ապա «Երիտասարդական Մտորումներ» խորագրով գրոյց մը ունեցանք, որուն ընթացքին քն-

12-դ կարգի դասարանը եւ ծանօթացանք ուսանողներուն: Հայերէնի դասապահն էր: Հայերէնաւանդ ուսուցչուհի Շողեր Աշրօզեան մեզի ծանօթացնելով աշակերտներուն, յայտնեց դասապահերը աւելի հաճելի, օգտաշատ ու հետաքրքրական դարձնելու միջոցները, որպէսզի իւրաքանչիւր ուսանող ազատ ըլլայ արտայայտուելու, կարծիքը յայտնելու եւ դասին մասնակցեցնելու: Ապա մեզ ջերմօրէն ընդունեց ԱՉԳ. Ուսումնասիրաց Միացեալ Ծեմարանի տնօրէն Վարուժան Փանոսեանը:

Տնօրէնը դպրոցին մասին տեղեկութիւններ տուաւ մեզի, յետոյ միասին գրուցեցինք Զեւապի եւ Հալեպի ճեմարաններու իրավիճակին շուրջ: Իրականութեան մէջ երկու ճեմարաններն ալ նոյնանման դժուարութիւններ կը դիմագրուեն: Վերադառնալով բանակավայր, կրկին գրոյցի օրակարգ մը ունեցանք, այս անգամ դրամի արժեքին շուրջ, քննարկելով անոր ունեցած ազդեցութիւնը բարոյական արժեքներուն վրայ:

Կեսօրէն ետք, մեր ոտնագնդակի խումբը արդէն պատրաստ էր բոլորիս կողմէ սպասուած մրցումին, որ պիտի ընթանար Հալեպի Շրջանաւարտից Միութեան եւ Զեւապի ՀՄԸՄ-ի խումբերուն միջեւ: Համալիրի դաշտը երիտասարդութեամբ լեցուն էր: Խաղացողները իրենց աշխուժութեամբ խանդավառեցին հանդիսատեսները: Օրը բոլորեցինք bitcoin-ի մասին օգտաշատ դասախօսութեամբ, խրախճանքով ու բարձր տրամադրութեամբ:

Յաջորդ օրուան անհամբերութեամբ կը սպասէինք, որովհետեւ ծով պիտի մեկնէինք: Ծովուն ալիքներուն հետ ծփացինք ու հանգստացանք՝ վայելելով անոր բոյրն ու բաց երկինքին կապոյտը:

Կիրակի օր բանակումին վերջին օրն էր: Առաւօտուն ներկայ գտնուեցանք Զեւապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Սուրբ Պատարագին: Յետմիջօրէին մեր յայտագիրը կրկին հարուստ էր: Չրուցեցինք կամքի տիրապետութեան մասին, ապա ունկնդրեցինք «Հայ Երիտասարդը Եւ Հայ Եկեղեցին» վերնագիրով դասախօսութիւն մը:

Յաջորդ օրակարգը «ազատ բեմ»-ն էր, ուր քննարկեցինք բանակումը՝ տարբեր տեսանկիւններէ դիտուած:

Երեկոյեան, Ժամանցեցին Զեւապի մեր ընկերները, որոնց հետ ընթրիքի մը շուրջ անմոռանալի պահեր ապրեցանք եւ ջերմ կապեր հաստատեցինք իրարու հետ: Ապա խրախճանքով ու ջերմ մթնոլորտով մեր բանակումը իր աւարտին հասաւ:

Երախտապարտ ենք ԱՉԳ. Զարեն Եփփե ճեմարանին մեզի պարգեւած ճեմարանական ինքնութեան համար: Ուր ալ ըլլանք պիտի վայելենք այդ պատկանելիութեան ջերմութիւնը:

ԻՆՉ ԵՒ ՈՐ...

Սկիզբ՝ էջ 4



նարկեցինք մեր՝ երիտասարդներուս ամօրեայ դժուարութիւններն ու հարցերը: Հաճելի եւ օգտակար էր լսել կարգ մը դժուարութիւններ յաղթահարելու համար մեր ընկերներուն կարծիքները: Ծաշի դադարէն ետք, շարժապատկեր մը ցուցադրուեցաւ՝ ուրախութեան հասնելու ճանապարհին մասին, որուն մասին գրուցեցինք տարակարծութիւններ տալով ու մեր կարծիքները համատեղել փորձելով: Երեկոյեան ԱՉԳ. Զարեն Եփփե Ծեմարանի շրջանաւարտ, քեանապարնակ Կարօ Մանճիկեան դասախօսեց՝ «Ծեմարանը որպէս արժեք» նիւթը: Ան յիշելով Զարեն Եփփե Ծեմարանի պատմութիւնը լուսարձակի տակ առաւ երջանկայիշատակ շրջանաւարտ դէմքեր, որոնց ջանքերով Ծեմարանը պահած է իր հայեցի մթնոլորտը ու գայն սերունդէ-սերունդ փոխանցած: Գիշերուան ընթրիքին եւ ազատ Ժամերուն ընթացքին կը տիրեր ընկերային ջերմ մթնոլորտ մը՝ երգեր, խաղեր, գրոյցներ, որոնք կարծեք վերջ չունէին: Այս մթնոլորտը Շրջանաւարտից Միութեան մեզի շնորհած պարգեւներէն մէկն է:

Բանակումին երկրորդ օրը Զեւապի ԱՉԳ. Ուսումնասիրաց Միացեալ Ծեմարան ուղղուեցանք: Ծեմարանին վայրը տարբեր էր մեր վարժարաններէն, որովհետեւ բնութեան գիրկն էր, շրջապատուած՝ կանաչապատ լեռներով եւ պարտէզներով: Որքան հաճելի է այսպիսի դպրոց մը յաճախելը, մտածեցի: Հանդարտութիւն մը կը տիրեր հոն: Երբ ներս մտանք, այցելեցինք

գոչենք. Կեցցե՛ ժողովրդավարութիւնը, մարդկային իրաւունքները, ժողովուրդներու եղբայրութիւնը: Որո՞ւ հոգը, թէ Արցախը կը կորսնցնենք վերջնականապէս, երբ երեք տարի առաջ իշխանաւորները երդում-պատամ կ'ըլլային, որ գրաւեալ շրջանները պիտի ազատագրուին, գերիները պիտի վերադարձուին, հիմա ալ երդում-պատամ կ'ըլլան, որ Սիւնիքն ու այլ շրջաններ «կարմիր գիծ են» ու զիջում պիտի չընեն: Ասոնք միշտ ալ ըրած են իրենց խոստացածին ճիշդ հակառակը, այնքան մը, որ ստելն ու դիմաշրջումը դարձած են անպատիժ մնացող սովորութիւններ: Մարդ չ'ուզեր լսել ասոնց բարի խոստումներն ու յանձնառութիւնները...

...Չենք ուզեր հաւատալ, որ Հայաստանն ալ մտած է անվերադարձ կորուստի ճամբուն մէջ եւ Փաշինեան-Ալիեւ հանդիպումը պիտի ըլլայ մեր հայրենիքին ու ազգին տրուելիք «շնորհի հարուած»-ը: Անհրաժեշտ տ, իՆչ կ'ընենք, անյետաձգելի հրամայական է, որ ԱՉԳ-ային կոմիտէն ձայնի արագութեամբ աւելի՛ լոյսի արագութեան հասցնէ իր շարժումին թափը եւ բոլորը, Հայաստանէն միւսէն Արցախ եւ Սփիւռք՝ հայրենիքի փրկութեան շոգեկառքին լծէ ԱՉԳԸ: Փաշինեան եւ իր ուսապարկերը կրկին ու կրկին բացայայտած են իրենց բռնատիրական եւ դաւաճանական դիտաւորութիւնները, գանոնք փաստած են բազմիցս: «Ով որ քաջ է, իՆչ կը սպասէ»: Եւ կասկած չկայ, որ քաջերը աւելի մեծ թիւ կը կազմեն, քան վատերն ու վախկոտները:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ
ՇՈՒՇԻ ԵՒ ՀԱԼԷՊԻ
ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Կիրակի, 8 Հոկտեմբեր 2023-ին, Հալեպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յետ Ս. եւ Աննահ Պատարագին, տեղի պիտի ունենայ Շուշիի պաշտպանութեան եւ Հալեպի պատերազմի նահատակներու հոգեհանգստեան արարողութիւն:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին ԱՄԺ Տան «Լեւոն Ծանթ» սրահէն ներս:

ԴԵՊԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ



Եփրուհի Մինասեան

Մօտ վեց տարի առաջ էր, երբ սրտի տրոփումով եւ տատամսումով «Սպիտակ» ճաշատանը ելն էր բարձրանալիս դեպի երրորդ յարկ, ուր (այդ օրերուն) կը գտնուէր ամբողջ Միջին Արեւելքի Հայագիտութեան եւ հայ մտքի զարգացման եզակի հիմնարկը՝ Հայագիտութեան Հիմնարկը: Յայտարարութիւնը «Գանձասար» շաբաթաթերթին մէջ ընթերցած էի եւ որոշում կայացուցած՝ բարելուել մայրենիի իմացութիւնս: Մտմտութիւնքս կանգ առին հիմնարկի տնօրէնուհիին՝ օրդ. Ֆիմի Տեր Յակոբեան

եան, պրն. ԼԵՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ, օրդ. Արփի Սանոսեան, օրդ. Մարիա Գաբրիելեան եւ պրն. ԱՆՕ Գաթրճեան:

Յարգանքի եւ երախտագիտութեան արժանի անխոնջ դասախօսներ, որոնք մեծ բժայնորութեամբ կատարեցին եւ կը կատարեն իրենց վստահուած դժուարին առաքելութիւնը: Իւրաքանչիւր դասախօս կիրթն փոխանցելու իր իւրայատուկ տաղանդը, ձեւը եւ ոճը ունէր, իսկ իւրաքանչիւր կիրթ՝ իր յատուկ բնոյթը: Եւ այս բոլորը միահիւսուելով, միաձուլուելով կազմեցին մեր լեզուն, պատմութիւնը, մեր ազգութիւնը եւ հայրենիքը:

Ինձի համար հետաքրքրական էր նաեւ հպարտանք, թէ երբ ուրիշ ազգեր ունեցած են Լեւնթիմուրի եւ Ճենքիգիսանի նման արիւնարբու հրէշներ, մենք ունեցանք Մ. Մաշտոցի, Մ. Խորենացիի, Նարեկացիի, Աբովեանի, Թումանեանի, Իսահակեանի, Չարենցի, Չոփրապի եւ Դուրեանի նման շատ ու շատ հանճարներ, գիտնականներ եւ գիտարարներ, թէ երբ այլ ժողովուրդներ գոյացած են կռուելու, սպանելու ու ատելու, հայ ժողովուրդը միշտ եղած է կերտող ու արարող: Եւ այսպէս հպարտանալով հայերէն լեզուով ու ազգութեամբ ես դասընկեր-դասընկերուհիներուս հետ միասնաբար, համերաշխութեամբ, գիրար օգնելով եւ քաջալերելով բոլորեցիք քառամեայ ծրագիրը, սակայն մենք առ այսօր կը շարունակենք մեր յաճախակի հանդիպումները, վերոյիշելու այդ գեղեցիկ պահերն ու օրերը: Վերադառնալով ինձի, պետք է խոստովանիմ, որ այնքան ալ հեշտ էր ինձի համար դասերս պատրաստելը: Տեսային պարտականութիւնները, ընկերային պարտականութիւնները ինձմէ կը խլէին ամբողջ օրը, եւ ես միայն գիշերուան ու ժամերուան առիթ կ'ունենայի պատրաստելու պահանջուած դասերը, առօրեայ աշխատութիւններս աւարտելէ ետք: Սակայն համոզուած էի, որ սերը ուսման հանդէպ ու յամառ աշխատանքը յաջողութեան գրաւակներն են: Յիշելու արժանի է օրդ. Սիլվա Ճապարոսեանը՝ հիմնարկի տնօրէնուհին, որ միշտ մեր կողքին կանգնած քաջալեր հանդիսացաւ մեզի մեր ուսման ճանապարհին:

Այսօր ես այն չեմ ինչ որ էի վեց տարի առաջ. կը վայելեմ ոչ թէ Ալիսի հրաշալիքներու աշխարհը, այլ՝ հազարամեայ հայոց լեզուի ու գրականութեան գանձարանը, որուն հրաշալիքներով կը շարունակեմ հիանալ ամէն օր:

Թող Հայագիտական Հիմնարկի ջանք միշտ անմար մնայ եւ թող իրերայաջորդ սերունդները վառ պահեն զայն մերոպեան հազարամեայ ականորով:

ՀՐԱՆՔ ՏԵՂԻ...

ՎՍԿԻՊՔ՝ Էջ 5

Կը ծաղկի՞ արդէք հողը կըրկին իր բնակիչներով:

Կը յիշեմ Սուրիոյ Քեսապ հայկական ամառը, որ 2014-ին ասպատակուեցաւ կրկին թուրքի կողմէ, դատարկուեցաւ, քարուքանդ եղաւ ամէն բան: Բռնաբարուեցաւ, լլկուեցաւ գանազան թուրք ցեղախումբերու, ահաբեկիչներու կողմէ: Բայց անյայտ պատճառներով հողը կրկին վերադարձաւ իր տերերուն:

Հրա՞ջք էր... աղօթքներու՞ պատասխան:

Մայրերու օրէն մինչեւ հայրերու օր՝ մնաց բռնագրաւուած:

Աստուած իմ, երանի հպումով մը միայն, հրաշքով կրկին, քմահաճ թագաւորներուն մէկ հրամանով Արցախը վերադարձուի իր տերերուն:

ՆԱԽԱՊԱՅ ԱՍՍՏ...

ՎՍԿԻՊՔ՝ Էջ 1

Նաստանի Խանձօ քաղաքին մէջ, որուն ընթացքին կողմերը ստորագրեցին սուրիական-չինական ռազմավարական գործակցութեան համաձայնութիւն:

Նախագահ Ասատ խօսք անելով ըսաւ. «Ուրախ ենք Հինաստան մեր այցելութեամբ, Հինաստան նեցունկ կը կանգնի ժողովուրդներու արդարութեան ձգտող դատերուն, մեկնելով օրինական, մարդկային եւ բարոյական սկզբունքներէ, որոնք միջազգային հարթակներու վրայ Հինաստանի քաղաքականութեան հիմքը կը հանդիսանան»: Նախագահը աւելցուց. «Միջազգային հարթակի վրայ Հինաստան շինիչ դերակատարութիւն ունի: Մենք կը մերժենք այդ դերը նսեմացնելու փորձերը՝ Հինաստանի ներքին հարցերուն միջամտելով կամ Հինաստանի հարաւային, ծովային շրջանին կամ Ասիոյ հարաւարեւելեան շրջանին մէջ լարուածութիւն ստեղծելով»: Ապա աւելցուց. «Հինաստան մեր այցելութիւնը կարելու էր կը համարուի ժամանակի եւ պայմաններու առումներով: Բազմաբեւեռ աշխարհը որչ աշխարհին հաւասարակշռութիւնն ու խաղաղութիւնը պիտի վերականգնէ: Փափաքս է, որ այսօրուան մեր հանդիպումը ռազմավարական ընդհանուած եւ երկարատեւ գործակցութեան հիմնաքարը դառնայ, որպէս

զի յաւելեալ կամուրջ մը կառուցենք Հինաստանի բազում կամուրջներուն կողքին»:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնելով Հինաստանի նախագահին ըսաւ. «Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի եւ Հինաստանի կառավարութեան՝ Սուրիոյ ժողովուրդին աջակցութեան համար: Հինաստանի բարեկամ ժողովուրդին նորանոր յարթանակներ կը մարդթեմ՝ գիտական, քաղաքակրթական եւ այլ ոլորտներու մէջ»:

Իր կարգին Հինաստանի նախագահը ըսաւ. «Սուրիան առաջին պետութիւններէն էր, որ նոր Հինաստանին հետ յարաբերութիւն մշակեց, ինչպէս նաեւ այն պետութիւններէն էր, որ ՄԱԿ-ի մէջ Փեքինի դիրքը վերականգնելու համար օրինագիծ ներկայացուց»: Ապա աւելցնելով ըսաւ, որ Սուրիա-Հինաստան յարաբերութիւնը կայուն է 67 տարիէ ի վեր: Այդ բարեկամական յարաբերութիւնը կայուն կը մնայ մինչեւ օրս:

ՆԱԽԱՊԱՅ ԱՍՍՏ...

ՎՍԿԻՊՔ՝ Էջ 1

ցի Սուրիոյ կառավարութեան երկրին մէջ խաղաղութեան հաստատման բոլոր ջանքերուն:

-Հինաստան կը մերժէ արտաքին ուժերուն կողմէ սուրիական ներքին հարցերուն միջամտումը, սուրիական հողերուն վրայ գիւնդակաւ ակտիվիստներու կողմէ սուրիական հարստութիւններու թալանումը:


-Հինաստան կոչ կ'ուղղէ պատկան պետութիւններուն՝ Սուրիոյ դէմ պարտադրուած տնտեսական պատժամիջոցները վերացնելու:

-Երկու կողմերը պիտի շարունակեն գորակցիլ գիրար կարեւոր եւ ճակատագրական դատերուն:

-Սուրիական կողմը կը հաստատէ, որ Հինաստանի ժողովրդական Հանրապետութիւնը օրինական միակ կառավարութիւնն է, որ կը ներկայացնէ ամբողջ Հինաստանը եւ Թայուան Հինաստանի անբաժանելի մասնիկն է:

-Կողմերը կը մերժեն բռնատիրական ուժերուն քաղաքականութիւնը, ներառեալ պետութիւններու դէմ տնտեսական միակողմանի պատժամիջոցներու պարտադրումը:

ՀԱՅ ԾԵՐԱՆՈՆ



ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Հայ Ծերանոնը կարիքը ունի՝

- Այցելու հաշուապահի,
- Զարտուղարի,
- Գիշերապահի,
- Մաքրարարի:

Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ թիւերուն՝ 0944 867756 - 0991 488263:

«SOS ԱՐՑԱԽ»

Սուրիահայ Օգնութեան Խաչի մեծ ընտանիքը Արցախի օժանդակութեան ՀՕՄ-ի ընդհանուր ծրագիրներուն մասնակցելով կազմակերպեց ցուցահանդես-վաճառք:



Արդարեւ, Երեքշաբթի, 19 Սեպտեմբեր 2023-ին բացումը կատարուեցաւ «SOS Արցախ» խորագիրը կրող ցուցահանդես-վաճառքին Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

ՍՕ Խաչի քայլերգի ունկնդրութենէն ետք, ցուցահանդեսի պաշտօնական բացումը կատարուեցաւ ձեռնամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Ս. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի եւ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեանի:

Ցուցահանդեսի բացման սրբազան հօր կողքին ներկայ էին Հոգեշնորհ Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգային Վարչութեան Զարգացական Ժողովի Պատկան Մարմինի ու բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ, խաչուհիներ եւ հիւրեր:

Սոյն ցուցահանդես վաճառքին իրենց մասնակցութիւնը բերին Աշխատանոցի, Մանկամտուրի, Պատասպարանի «Փեթակ» եւ «Շի-

մասնաճիւղերով Սեպտեմբեր ամիսը նուիրեց Արցախի ժողովուրդին օժանդակութեան ծրագիրներուն:

Ապա ատենապետուհին ընթերցեց Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան Արցախի հրատապ օժանդակութեան կոչը: ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը Սեպտեմբեր 14-ի գիշերը որոշում առած էր համագործակցիլ «Մենք եմք Մեր Սարերը» բարեսիրական կազմակերպութեան հետ: Առ այդ կոչ կ'ուղղէր ՀՕՄ-ի միաւորներուն իրենց ներդրումը բերելու հրատապ ծրագիրներու՝ արագ որոշում գոյացնելով գումար փոխանցելու կեդրոնականի գրասենեակ, կազմակերպելով դրամահաւաքներ



կամ ձեռնարկներ Արցախի Օժանդակութեան համար:

Ան եզրափակեց իր խօսքը շնորհակալութիւն յայտնելով բոլոր անդամուհիներուն, որոնք մասնակցեցան այս ձեռնարկին:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ Սուրիոյ Հայ Դատի գրասենեակի յանձնախումբի կողմէ պատրաստուած վաւերագրական տեսերիկ մը:

Շրջ. Վարչութեան Զարգացական Ցանձնախումբի անդամ Մարինա Պողիկեան ներկայացուց Ար-



րակ» վաճառատուներու յանձնախումբերը, ինչպէս նաեւ ՍՕ Խաչի նստավայրի երեք մասնաճիւղերը:

Բացման խօսքով հանդես եկաւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեան՝ շեշտելով որ ճակատագրական այս օրերուն, անգամ մը եւս կարիքը կը զգանք որպէս սուրիահայեր, ՀՕՄ-ուհիներ եւ խաչուհիներ համախմբուելու եւ միասնաբար մեր զօրակցութիւնը յայտնելու Արցախին եւ արցախահայութեան:

Խորապէս գիտակցելով Արցախի ժողովուրդին օժանդակելու անյետաձգելի հրամայականին, ինչպէս նաեւ հաւատարիմ մնալով «Ժողովուրդիս հետ ժողովուրդիս համար» կարգախօսին ՍՕ Խաչը իր 10

ցախի ներկայ իրավիճակը ցուցնող տեսանիւթ մը:

Անդրադառնալով Արցախի անցեալին ան դիտել տուաւ, որ Արցախի մէջ հայերը կ'ապրին աւելի քան 3000 տարիէ ի վեր: Ապա ներկայացուց համառօտ պատմութիւնը մինչեւ ներկայ ողբալի վիճակը:

Աւելցնենք, որ Շուկայավարման յանձնախումբին կողմէ պատրաստուած էին փոքրիկներուն համար ներկելու եւ գծելու յատուկ թերթիկներ: Ձեռնարկին հասոյթը յատկացուեցաւ Արցախին:

Ցուցահանդեսին ներկայ էին նաեւ տեղական լրատուամիջոցներ, ինչպէս «Գանձասար»-ը եւ «Ռատիո Երագ»-ը:

Սոնիա Չամպազճեան-Ճարպիկեան

ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՅԸ

Երկուշաբթի, 25 Սեպտեմբեր 2023-ի առաւօտեան, Ազգ. Միացեալ Նախակրթարանը իր դռները բացաւ ընդունելու մեր շատ սիրելի աշակերտները վերանորոգուած վարժարանէն ներս:

Այս առիթով, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի Օգնական Հոգ. Ս. Մանուկ Վարդապետ Պարիխանեան, Ազգ. Վարչութեան եւ Ուսումնական Խորհուրդի անդամներուն ընկերակցութեամբ այցելեց Ազգ. Միացեալ Նախակրթարան, 2023-2024 տարեշրջանի վերամուտը բաց յայտարարելու եւ սրբազան հօր հայրական օրհնութիւնները փոխանցելու վարժարանի Հոգաբարձութեան, Տնօրէնութեան, Ուսուցչական կազմին եւ աշակերտութեան, մաղթելով անփորձանք, արդիւնաւետ եւ բարեյաջող ուսումնական տարեշրջան մը:

Վարժարանիս տնօրէնուհի Նաիրի Զեօշկերեան-Բանոյեան արտասանեց բարի գալուստի խօսքը, որուն ընդմէջէն շնորհակալութիւն յայտնեց սրբազան հօր իր հայրական հոգածութեան համար, ինչպէս

առաջին կարգի դաստիարակուհիներուն:

Վարժարանիս պետական տնօրէնուհի Պայան ալ-Նաքրի իր սրտի խօսքը արտասանեց, նաեւ վեցերորդ կարգէն երկու աշակերտուհիներ հայերէն եւ արաբերէն սրտի խօսքեր ներկայացուցին, ապա Հոգեշնորհ Ս. Մանուկ Վարդապետ Պարիխանեանի առաջնորդութեամբ բոլորը «Տերունական



աղօթք»-ը եւ «Չգործս ձեռաց մերոց»-ը աղօթելէն ետք զոյգ մը աղաւիկներ թոցուեցան, որպէս խաղաղութեան խորհրդանիշ եւ բոլորին մասնակցութեամբ «Ազգ իմ փառապանծ» երգով վերջ գտաւ բացման



Նաեւ բոլոր այն հաստատութիւններուն եւ բարերարներուն, որոնք իրենց նիւթական օժանդակութեամբ եւ ներդրումով սատար հանդիսացան այս վարժարանի վերանորոգման: Ան նաեւ անդրադարձաւ Արցախի իրավիճակին եւ բոլոր մանուկներուն, որոնք զրկուե-

հանդիսութիւնը: Իսկ առաջին զանգը հնչելէն ետք, աշակերտները դաստիարակուհիներուն ընկերակցութեամբ իրենց դասարանները բարձրացան եւ ստացան դպրոցական պայուսակներ ու գրեւական պիտոյքներ բարերարներ՝ Վրժ եւ Տիգրան Գաբրիէ-



ցան ուսում, աղօթելով առ բարձեալն Աստուած, որ խաղաղութիւն պարգեւէ համայն աշխարհին, յատկապէս հայոց աշխարհին: Ետքը առաջին կարգի աշակերտները իրենց մանկապարտեզի դաստիարակուհիներուն ընկերակցութեամբ ծափողջոյններով դիմաւորուեցան վեցերորդ կարգի աշակերտներուն կողմէ եւ յանձնուեցան

եան եղբայրներուն կողմէ, ինչպէս նաեւ գեղեցիկ փուլիկներ, որոնք պատրաստուած էին Դալար Կրպոյեան-Սարգիսի կողմէ, որ նաեւ ստանձնած էր վարժարանիս մուտքի յարդարումը:

Բոլորին վարձքը կատար:

Ազգ. Միացեալ Նախակրթարանի Հոգաբարձութիւն եւ Տնօրէնութիւն

ԻՆՅ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Կիսատ մնացած ձեր գործերը յաջողութեամբ պիտի աւարտին եւ դուք հոգեկան գոհունակութիւն ունենաք: Կարճ հանգիստի մը կարիքը պիտի ունենաք:

Յուլ
Մարդոց հետ ձեր յարաբերութիւնները խնամքով մշակեցէ՛ք: Ժամանակն է, որ ձեր գործերը արժեւորուին:

Երկուորեակ
Նիւթական պարգեւ մը պիտի ստանաք հեռաւոր բարեկամէ մը: Մանր-մունր դժուարութիւնները պիտի փարատին վերջնականապէս: Ինքնավստահ եղէ՛ք:

Խեցգետին
Ձեր ընկերներուն հանդէպ աւելի հոգատար վերաբերմունք ցուցաբերեցէ՛ք: Մի՛ մոռնաք, որ դուք ալ ժամանակին անոնց աջակցութիւնը վայելած էք:

Առիծ
Չափազանց յոգնած եւ ուժասպառ էք: Մի՛ վիհատիք: Ամեն բան իր վերջը ունի: Օդափոխութեան կարիքը ունիք, որպէսզի կազդուրուիք:

Կոյս
Աշխատասիրութիւնն ու նուիրումները ձեր գլխաւոր յատկանիշներն են: Կարճ տաճկապէ մը ետք երկար շունչ մը պիտի քաշէք եւ երջանիկ ըլլաք:

Կշիռ
Նոր գործի մը ամառապարկը պիտի ընդունիք եւ հպարտանաք: Նիւթական գետնի վրայ բարելաւում մը պիտի արձանագրէք: Հանգստացէ՛ք:


Կարիճ
Չափազանց խելամիտ եւ հեռատես էք: Ձեր դիւանագիտութեան շնորհիւ բարձունքներ պիտի նուաճէք եւ փորձանքներէ ազատիք:

Աղեղնաւոր
Քաջաբար դիմադրեցէ՛ք ձեր առջեւ ծառայած բոլոր խոչընդոտները եւ հաստատակամ քայլերով յառաջացէ՛ք: Յաջողութիւնը ձեզի կը սպասէ:

Այծեղջիւր
Այս շաբաթ ձեր լարուածութիւնը իր գագաթնակէտին հասած է: Աւելի հաւասարակշռուած եւ խոհեմ եղէ՛ք ձեր բարեկամներուն նկատմամբ:

Ջրիտ
Ձեր բոլոր հոգերէն պիտի ձերբազատիք վերջապէս: Ձեր սիրելիներուն հետ խաղաղ կեանք մը պիտի ապրիք: Մի՛ մտահոգուիք:

Ձուկ
Ձեր հարազատներուն հանդէպ անտարբեր կեցումով մի՛ ունենաք: Փոխադարձ սեր ու յարգանք ցուցաբերեցէ՛ք: Հանգիստը մը պիտի ստանաք:



Համարեց՝ Սուս Տէր Պողոսեան-Տարաքճեան

ՀԱԼԵՊԻ ԽԱՆԵՐԸ

Հիսն է ի վեր Հալէպ ճանջուած է որպէս Մերձաւոր Արեւելքի ամենէն վաճառաշահ եւ հարուստ քաղաքը՝ ունենալով բազմաթիւ խաներ:

Երեք դար ամառ Հալէպի ներքին եւ արտաքին վաճառականութիւնը հասած էր իր ամենէն ծաղկեալ վիճակին, Հալէպի մեծ եւ փոքր գրեթէ բոլոր խաները ո՛չ միայն ամենալուրջ ընդարձակ եւ բանուկ շուկաներ էին, այլեւ՝ եւրոպական ու ասիական ամեն տեսակ ապրանքներու մթերանոցներ: Զսանէն աւելի նշանաւոր խաները ճարտարապետական արուեստի սքանչելի նմոյշներ են ցարդ: Նաեւ եւրոպացիք սկիզբէն մինչեւ այսօր այս խաներուն մէջ բնակած են: Մնացեալ հարիւրէ աւելի խաները ցրուած են քաղաքին զանազան թաղերուն մէջ, որոնք երկու դար ամառ անշատ արուարձաններ էին ինչպէս ճըտէյտէ, Զասթալ Չարամի եւ այլն:

Միայնակ այս խաները իրենց շատ հաստակուռ պատերով եւ մեծադիր քարերով կառուցուած շէնքեր եղած են: Գետնայարկը բաժնուած է սենեակներու, որոնք միայն վերեւ բացուած պատուհաններով կը լուսանորոշէին: Առաջին յարկը ուներ ընդարձակ լուսաբացներ, ուր ամառ ատեն պանդուխտներ կամ խանի բնակիչներ կը պառկէին: Ասոնց քով փոքր սենեակներ ալ կային՝ ուր կը բարձրանային, ընդհանրապէս, խանին դրան քով դրուած սանդուխտով մը: Երկրորդ յարկը կը գործածուէր իբր ճամբորդներու հիւրանոց, չնչին վարձքի մը փոխարէն, բայց մեծ խաները՝ իբր վաճառականութեան կեդրոն, հարուստ ամենտրականներու ապրանքները պահպանելու համար:

Ամեն խան միայն մէկ դուռ ուներ, սա-

ՄԻՍԵՆՆ ԼԵՅԱՑԻ կը պատմէ իր ուղեւորութեան մասին ու կը թուէ 365 խան:

Ժ. դարէն ետք, Հալէպ քաղաքի ու նոյնիսկ շրջաններուն մէջ խաներուն թիւը բազմացած է, քաղաքը դարձած ըլլալով միջազգային ամենալուրջի մեծ շահաստան մը: Փոքր ու տծեւ խաներուն տեղ շինուած են աւելի ընդարձակները: Ժ2. եւ ԺԵ. դարերուն, Հալէպի վաճառականութիւնը այնքան մեծ ծաւալ ստացած է եւ Եւրոպայի ու Ասիոյ հետ ամեն տեսակ ապրանքներու այնքան մեծ



փոխանակութիւն տեղի ունեցած, որ Հալէպի կառավարիչներ թանկարժէք ապրանքներու փոխանակութիւնն ու փոխադրութիւնը ապահով եղանակով կատարելու կանխահոգութեամբ քաղաքէն դուրս ալ կառուցած են գեղեցկաշէն եւ ընդարձակ խաներ, որոնք յաճախ ենթարկուած են գինուած աւազակներու յարձակումին ու կողոպուտին: Դարեր շարունակ աւազակներու որջերու վերածուած են գլխաւորաբար Հալէպէն Ալեքսանտրէթ տանող արքունի բանուկ ճամբուն երկու եզերքները, ուր միշտ թալանի նստած են քիւրտ, թիւրքմէն եւ եորիւքներ կամ իրենց գործակալները ու բաժնեկից եղած են ձեռք ձգուած կողոպուտներուն: Այս է պատճառը, որ անուտրական այդ բանուկ ճամբուն վրայ, մասնաւորապէս Հալէպի մօտ եղող կայաններուն մէջ շինուած են հաստատուն, ընդարձակ ու գեղակերտ խաներ, ուր ապահովութեան համար կառավարութեան կողմէ պահակագունդեր դրուած են:

- Իսկ Թուման, Զուէր գետի վերջաւորութեան կը գտնուէր այս գիւղը, որ այնքան կարեւոր կայան մըն էր հարեւան քաղաքներէն ու արեւմուտքէն Հալէպ հասնող կամ մեկնող կարաւաններուն:

Այժմ աւերակներ միայն իր անցեալի երբեմնի ճոխութիւնը կը վկայեն:

Հալէպի խան Սապունը խան Թումանի հետ նոյն ճարտարապետական ոճը կը կրէ: Ինչպէս նաեւ Հալէպի Զասթալ Սահաթ Պիզան, մասնաւորապէս իր անկիւնասփիւներու ոճովն ու զարդարուն հիւսուածքով, շատ նման է Իսկանդարի հան Թումանի: Համա-Հալէպ ճամբուն վրայ կը գտնուի Իսկանդար, որ կը ծառայէր Մէքքէ տանող իսլամ ուխտաւորներու կարաւաններուն՝ իբրեւ օթեւան:

Հալէպ ունեցած է 35 խան:



կայն երկու փեղկով: Երկաթապատ մեծ փեղկերէն մեկուն վրայ կը գտնուէր փոքր դռնակ մըն ալ, որ մինչեւ ուշ ատեն կրնար բաց մնալ: Մինչեւ դար մը ամառ Հալէպի մեծ խաներուն մէջ կը նստէր խանին աղան՝ ամեն տեսակի ապրանքէ որոշ տուրք մը կը ստանար եւ գործակատարի պաշտօն կը վարէր, իր հրամանին տակ ունենալով միշտ խանին մէջ բնակող վստահելի սենեկապետներ, որոնք այդ ժամանակ ընդհանրապէս հայեր կ'ըլլային: Արաբկիրի շրջանի խաներն ալ ընդարձակ ու մաքուր քարերով սալաշատուած բակեր ունէին, օժտուած գեղակերտ աւազաններով:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

-Սուրիոյ հանրապետութեան նախագահ Պաշար ալ-Ասատ եւ առաջին տիկինը Չինաստան պաշտօնական այցելութեան օրերուն ներկայ գտնուեցան Ասիոյ Ողոմպիական խաղերու բացման արարողութեան: Նախագահն ու առաջին տիկինը յոտնկայս դիմաւորեց մրցաշարքին մասնակցող Սուրիոյ պատուիրակուիները:



-Ուրբաթ օր սկիզբ առաւ Սուրիոյ ֆութպոլի Ա. դասակարգի 2023 - 2024 տարեշրջանի մրցաշարքը: Հալէպի Ախլին 2 - 2 հաւասարութեամբ աւարտեց ճապէի խումբին հետ կատարած հանդիպումը, իսկ Հուրիէն 2 - 0 արդիւնքով գիջեցաւ Սահէլին: Լաթաքիոյ Յրթթինը 21 - 0 արդիւնքով յաղթեց Ուահտէին, իսկ Թըշըին ճէշ հանդիպումը աւարտեցաւ 1 - 1 հաւասարութեամբ:



ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՓՈՆԱԿՈՅԵԱՆ ԴԱՐՁԱՐ

Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանեան չլազերեցաւ պաշտպանել աշխարհի ախոյեանի կոչումը Պելկրատի մէջ ընթացող առաջնութեան: Հայ 97 քկ. ծանրութեան ըմբիշը եզրափակիչին պարտութեան մատնուեցաւ քուպացի Դանիէլ Ռոսիլիո Կինտելանէն: Ալեքսանեան վերջին վայրկեաններուն ստիպուած բաւարարուեցաւ արծաթէ մետալով: Ան հնարաւորութիւնը ունեցաւ նուաճելու Ողոմպիական խաղերու ուղեգիր: Իսկ 60 քկ. ծանրութեան ըմբիշ Գեորգ Դարիպեան 3-րդ տեղի համար մարտին վերջին 3 վայրկեաններուն կորսնցուց առաւելութիւնը եւ պարտուեցաւ չինացի մրցակիցին, 3-5 արդիւնքով:



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ԵՐԿԱՐԱԶԳԵՏ ԶԱՒԻ ԴԱՅՍԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ ախոյեան Պարսելոնան երկարաձգեց խումբի մարզիչ Զաւի Էրնանտեզի հետ ունեցած իր պայմանագիրը մինչեւ 2025 թուականի Յունիս, եւս մէկ տարուան երկարաձգելու հնարաւորութեամբ: Պայմանագիր ստորագրելու արարողութիւնը տեղի ունեցաւ 22 Սեպտեմբերին Ժամպ Նոյի գրասենեակին մէջ, ներկայութեամբ ակումբի նախագահ Խոան Լապորտայի, փոխնախագահներ՝ Ռաֆա Իւստի եւ Էտուարտ Ռոմեոյի, ֆութպոլի հարցերով տնօրէն Թեկուիի:



Աւելցնենք, որ Զաւի 2019-էն կը գլխավորէ Պարսելոնան, որ անոր գլխավորութեամբ դարձաւ Սպանիոյ ախոյեան եւ Սուփըր գաւաթակիր:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 457) - ՆՈՒԽՐՈՒԱԾ՝ ԱՐԳԱՅԻՆ

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1			■								■	
2				■								
3		■			■			■		■		
4			■									■
5							■					
6		■									■	
7				■		■		■				
8									■			
9									■			
10		■										
11											■	
12	■											


- Հորիզոնական**
- Յուցական դերանուն: Արցախի քաղաքներէն, որ կը հանդիսանայ ռազմավարական կարեւորագոյն հանգոյց Հայաստանի Սիւնիքի մարզի եւ Արցախի ենթակառուցուածքներու միացման: Ձայնակիշ:
 - Իշխան: Արցախի ամենաբարձր գագաթը:
 - Շաղկապ: 720:
 - Հակառակ՝ եգր: Եական բայ: Արցախի քաղաքներէն, ուր կը գտնուի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց Մայր տաճարը:
 - Արցախի առաջին դպրոցը, որ հիմնուած է Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր:
 - Արցախի մէջ Կաթաւաճոր եւ Զաչաւան գիւղերը ընդգրկող քաղաք:
 - Հաստատական պատասխան: Միայն:
 - Արցախի լեռնաշղթայի ամենաբարձր կէտը:
 - Հակառակ՝ Արցախի ազատամարտիկ Աշոտ Ղուկեանի ծածկանունը:
 - Հայկական մականուններու վերջավանկը: Հակառակ՝ Աստուածաշունչին մէջ Յակոբին եղբայրը:
 - Արցախի գետերէն:
 - Արցախի մայրաքաղաքին մէջ գտնուող «Մենք ենք Մեր Սարերը» յուշակոթողի քանդակագործին մականունը:

- Ուղղահայեաց**
- Արցախի մայրաքաղաքը:
 - Ձայնաւոր տառեր: Տարի: Գրաբար՝ ո՞ւր:
 - Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Պիւղ: Անսկզբնատառ՝ հայ գուսան:
 - Հակառակ՝ արփի: Հանքային համեմ:
 - Հակառակ՝ տառի մը հարեանները: Արցախի մէջ Թարթառ գետի միջին հոսանքի աշ կողմը գտնուող քաղաք:
 - Հակառակ՝ հովիտ: Տառի մը հարեանները: Հայ գուսան:
 - Հակառակ՝ 280: Հակառակ՝ հաստատական պատասխան: Հակառակ՝ աշակերտ:
 - Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Տառի մը անունը:
 - Հակառակ՝ առաջին պտուղ իմաստը ունեցող արական անուն: Շաղկապ:
 - Բայական լծորդութիւն: Հակառակ՝ արեան շրջագայութեան խորովակ:
 - Հայաստանի եւ Արցախի միջեւ գոյութիւն ունեցող միակ անցքը: Անձնական դերանուն:
 - Զայ: Արցախի պետական օրհներգի բառերու հեղինակին մականունը:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 456)

ԼՈՒՐԵՐ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	խ	ե	ս	ւ	ւ	կ	ա	լ				
2	ա	ր	ի	ս	ր	բ	ս	ա				
3	ն	ա	հ	լ	ա	ա	ս	ա	ա	ն		
4	ե	կ	ա	ե	կ							
5	ի	ւ	ւ	ե								
6	ճ	ի	ա	լ	ա	ե	ւ					
7	ա	ր	ր									
8	դ	ն	ք	փ								
9	ա		ա	ի	ր							
10	ե	ւ	ւ	ե	ա							
11	ճ	ա	ճ	ա	ե	ւ	լ					
12	հ		կ	ե	ր							



ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲՈՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՈՇԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՒ

Հայաստանի Հանրապետության վերականխության 32-րդ ամեակին առիթով, Կիրակի, 24 Սեպտեմբեր 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն Ներս Յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին հանրապետական մաղթանք եւ

սուրբան խորհրդական Տիար Դաւիթ Թաղեոսեան, Ազգային Վարչութեան անդամներ, ՅՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի տարագաւոր սկաւաւներ եւ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չե-

լիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Չալէն Վրդ. Նաճարեան Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յա-

- Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Լաթաքիոյ եւ Ծով-



եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուեցաւ:
- Հալէպի Սրբ. Զառանկից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան հանդիսապետեց Սուրբ եւ Ա-

րեւցեան: Այս առիթով, Սրբազան Հայրը իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին:
- Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Յովակիմ



ուր պատշաճի քարոզեց: Յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին, հայր սուրբը հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարեց, մասնակցութեամբ՝

գերեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Ա. Զինյ. Զեօշկերեան:
Յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին, քահանայ հայրը հանրապետական մաղթանք եւ



մահ Պատարագին, որուն ընթացքին հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարեց, մասնակցութեամբ՝ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չերեւեցեանի եւ Արժ. Տ. Գաննիկ Զինյ. Չափանեա-

Վրդ. Բանճարճեան Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց: Պատարագի ընթացքին, հայր սուրբը հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութեան արարողակարգ կատարեց, մասնակցութեամբ՝ Արժ. Տ.



Արժ. Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեանի եւ Արժ. Տ. Արշակ Ա. Զինյ. Ալաճաճեանի:
- Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Ճեգիրիի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեան:

եռագոյն դրօշի օրհնութիւն կատարեց:
- Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Զեսապի Հոգեւոր Տեսուչ Հոգ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց:



Լի: Արարողութեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետության Հալէպի Գլխաւոր Հիւպատո-

Չարե Զինյ. Շաքարեանի:
- Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Մեծի Տանն Կի-



Յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին, քահանայ հայրը հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարեց:

Յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին, հայր սուրբը հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարեց: